ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սերգեյ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, հունիսի 13-ից 15-ը, 2017թ.

4. Հրավիրող կողմը

GAVI միջազգային դաշինք

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն GAVI պատվաստումների և պատվաստանյութերի միջազգային դաշինքի խորհրդի անդամների հերթական հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները

Եվրոպական երկրների առողջապահության նախարարությունների մասնակցությունն ընդգրկող այս հանդիպումը լավ հնարավորություն էր տարածաշրջանում առկա համագործակցության ամրապնդման, ընդհանուր քաղաքական ռազմավարության մշակման համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պատվաստանյութերի ներդրման 2016-2020 թվականների ռազմավարության ներդրման և առաջընթացի, առողջության վրա կլիմայական փոփոխությունների և բնապահպանական ազդակների ներգործության և իմունիզացիայի վերաբերյալ հարցեր: Համանախագահները ներկայացրեցին GAVI պատվաստանյութերի և իմունիզացիայի միջազգային դաշինքի խորհրդի աշխատանքային պլանը, դրանից բխող գործողությունները, ինչպես նաև համաձայնեցված որոշումները:

Հանդիպմանը քննարկվեց նաև արտակարգ իրավիճակներից տուժածների և փախստականների նկատմամբ ԳԱՎԻ դաշինքի կողմից վարվող քաղաքականությունը:

ԳԱՎԻ-ի խորհրդի անդամները հանդես եկան ֆինանսական հաշվետվությունների, գործընկերների ներգրավվածության շրջանակների ներկայացմամբ և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակներում աշխատանքային հանդիպումներ եղան ԳԱՎԻ դաշինքի մի շարք անդամ-պետությունների առողջապահության ղեկավար անձանց հետ, որոնց հետ քննարկվել են երկրների միջև առողջապահության բնագավառում համագործակցության ընթացքը, հնարավոր զարգացման ուղիները: Քննարկվել են նաև ՀՀ առողջապահության նախարարության և ԳԱՎԻ դաշինքի միջև համագործակցության նոր ուղիները, ԳԱՎԻ դաշինքի կողմից տեխնիկական օժանդակության հնարավորությունները:

Միջոցառման շրջանակներում հանդիպել եմ Համաշխարհային Բանկի մարդկային ռեսուրսների զարգացման գծով փոխտնօրենի, ինչպես նաև UNICEF-ի ծրագրերի գծով փոխտնօրենի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի առողջապահության բնագավառին աջակցության առաջիկա ծրագրերը, այդ թվում նաև բժշկական ապահովագրության ներդրման ծրագրի հնարավորությունը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

GAVI-ին ուշադրությանբ կքննարկի բարձրացված հարցերը և կայացված որոշման վերաբերյալ կտեղեկացնի հերթական հանդիպման ընթացքում:

9. Գործուղվողները

Սերգեյ Խաչատրյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

19 հունիսի 2017 թ.